

ՀԱՊԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷՋ

1971ի ընթացքին, շինարարական գույց նոր ձեռնարկներ երուսաղեմի Հայ Պատրիարքության կողմէ, առիթ եղան որ երուսաղեմի պատմական երկու տարբեր վայրերու մէջ հնագիտական պեղումներ կատարուին: Այդ պեղումները, նախքան ծրագրուած շէնքերու կառուցումը, ամենէն հետաքրքրական և շատ արժէքաւոր արդիւնքներ տուին: Պեղումներու առաջին վայրն էր Հայոց Պատրիարքարանի պարտէզը, վանքին մուտքին դիմաց, ուր ներկայիս մեծ քափով կը շարունակուի կառուցումը Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց շէնքին: Իսկ երկրորդն էր քաղաքի պարիսպէն անմիջապէս դուրս, Սիոնի բարձունքին հայապատկան Ս. Փրկիչ սրբավայրը, ուր արդէն իսկ հիմը դրուած է Ս. Սարգիս Տաճարին, Ամերիկահայ մեծահամբաւ քարերար Տիար Հայկ Գալստիսեանի նուիրատուութեամբ կառուցանելի: Պեղումները, երուսաղեմի Հայ Պատրիարքության և Հնութիւններու Նախարարութեան կողմէ ձեռնարկուած, կը կատարուէին Մեռեալ Մովսի Ջեռագիրներու Թանգարանի տնօրէն, հնագէտ Մակէն Պոօշիի ղեկավարութեամբ:

ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ՊԱՐՏԷՋԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Պարտէզը, որ կը գտնուի Դաւիթի Աշտարակին (Միջնաբերդին) հարաւը, պատմական այն վայրն է ուր կառուցուած էր Հերովդէսի հռչակաւոր պալատը:

Պեղումները երեսն հանգիստ այս պալատին հիմքեր, ինչպէս նաեւ մասեր հսկայական այն սալաշատակ—բեմէն (*platform*), որ կը յատկանշէ Հերովդէսի զանազան կառոյցները: Առ այժմ յայտնի է միայն երկայնքը այդ սալաշատակին, որ մօտ 200 մէթր է: Ըստ կատարուած հաշիւներու, Հերովդէսի կառուցողները սալաշատակը պատրաստելու համար պէտք է որ մօտաւորապէս հարիւր հազար խորանարդ մէթր հող տեղափոխած ըլլան:

Հերովդէսի պալատին արեւմտեան կողմը երեսն բերուեցաւ մաս մը քաղաքի պարիսպէն՝ երկրորդ Հասարակապետութեան շրջանէն (Ն. Ք. Առաջին Դար — Յ. Ք. Առաջին Դար):

Դարձեալ, պեղումներու ընթացքին երեսն եկան խաչակիրներու պալատի մնացորդներ: Ըստ հաշուումներու, պալատը պէտք է կառուցուած ըլլայ մօտաւորապէս Տասներկուերորդ Դարու երրորդ տասնամեակին, երուսաղեմի խաչակիր քաղաւորներու կողմէ, Հերովդէսի պալատին հիմքերուն վրայ. ապահովաբար այս կառուցումին ատեն էր որ վերջնականապէս անհետացան հերովդէսեան պալատին մնացորդները: Խաչակիրներու կառոյցէն գտնուեցաւ կամարակապ ընդարձակ եւ շատ լաւ մնացած ամրողջ յարկ մը, որ կը բաղկանայ երկու մեծ սրահներէ. այս շինութեան տակ կը գտնուին ժայռափոր ընդարձակ հորեր: Նոյն վայրին մէջ, ժայռին վրայ ցցուն կերպով փորագրուած Լօրէնի խաչի մը (*Cross of Lorraine*) գիւտը շատ խոր հետաքրքրութիւն յառաջացուց գիտական շրջանակներէ ներս:

Պեղումները ղեկավարող Մակէն Պոօշիի կարծիքով, Հայոց Պատրիարքարանի պարտէզին մէջ երեսն բերուած այս մնացորդները կը հանդի-

սանան լաւագոյն կերպով պահպանուած հաչակիրներու շրջանի շինութիւններ Սուրբ Երկրին մէջ :

Պէտք է աւելցնել նաեւ , թէ Հերովդէսի պալատին եւ խաչակիրներու շինութեան միջեւ տարբեր ժամանակաշրջանի վերաբերող հետքեր չեն գտնուած պեղումներու ընթացքին , ինչ որ ենթադրել պիտի տար թէ մօտ հազարամեակ մը սլատմական այս վայրին վրայ բնակութիւն գոյութիւն ունեցած չէ :




Հ ա յ ո ճ Պ ա տ ր ի ա ր ք ա ռ ա ն ի Պ ա ր տ է գ .

Լօրէնի խաչը՝ հաչակիրներու պալատին ջրհորներէն մէկուն մէջ :

Սակայն , միւս կողմէ , խեցեղէն անօրներու շատ քանակ եւ հարուստ խումբ մը գտնուեցաւ , Ն . Ք . Եօրներորդ Դարու վերաբերող : Խեցեղէն այս տեսակաւոր անօրները մեծ կարեւորութիւն ունին յիշուած ժամանակաշրջանի ընդհանուր կեանքի ուսումնասիրութեան համար , և անոնց նմանները գրունուած են նաեւ Դարի Աշտարակի (Միջնաբերդ) եւ հրէական քաղաքի պեղումներու ընթացքին :

ՍՈՒՐՔ ՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ


Սիւն լերան բարձունքին, Երուսաղէմի համայնապատկերին իշխող զիրքի մը վրայ կը գտնուի հայկական դարաւոր սրբավայրը՝ Սուրբ Փրկիչի վանքը, որ իր գոյութեան երկար տարիներու ընթացքին ունեցած է փոքր-կոտ, եւ յաճախ տագնապալի ուրոյն կեանք մը. ան եղած է նաեւ հայ զրչագրութեան կարեւոր կեդրոն մը:



Սուրբ Փրկիչ վանք.

Հերովդէսեան շրջանի կառուէն գումարաւոր անօր:

Սակայն, բացի Հայութեան համար իր ունեցած նշանակութենէն, Սիւնի այս հողը մին է համայն քրիստոնէութեան ամենէն հին եւ կարեւոր սրբավայրերէն, որովհետեւ, ըստ աւանդութեան, հոն կը գտնուէր ապարանքը Կայիափա Բահանայապետին՝ որուն տարուեցաւ Յիսուս, Պիղատոսի յանձնուելէ առաջ: Այս աւանդութիւնը հաստատուած է քրիստոնէութեան Զորքոյդ Դարուն իսկ, Պոռտոյի Ուխտաւորին (*The Bordeaux Pilgrim*) կողմէ, 330 թուականէն քիչ առաջ:



Ս ու Ր Ր Փ Ր Կ Ի Ն Վ ա ն ք .

Բիզանդական կամ կանուխ Արարական շրջանի պրոնգեայ խաչ :

Պեղումները կատարուեցան հոն՝ ուր շուտով պիտի բարձրանայ հայկական նարտարապետութեան գեղեցիկ նմուշ Ս. Սարգիս Տաճարը, եւ մօտ տարւում մը անընդհատ աշխատանքները տուին աւելի քան գոհացուցիչ եւ շատ հետաքրքրական արդիւնք: Գրեթէ վերջնականապէս հաստատուեցաւ այն վարկածը, ըստ որուն Սիւն լեռան այս բարձունքը որոշ շրջանի մը եղած է երուսաղէմի ամենէն շքեղ քաղաքացիներէն մին, ուր բնակած է Հրեայ ընտրանին: Քիչ հեռու Կայիափայլի ապարանքէն, կը գտնուէր քահանայապետին՝ Աննայի տունը (ներկայ Ս. Հրեշտակապետաց վանքը, Պատրիարքարանգիս պատկանող): Եւ իրապէս ալ, աւելի քան 180 ոտք բարձր ներկայ լացի Պատէն (Արեւմտեան Պատ), այդ քաղաքացի պէտք է իրեն գրաւած ըլլայ Հրեայ հարուստ դասակարգը: Այս կը վկայեն մանաւանդ գտնուած քաղաքի գոմար (ներմակ, սեւ, կանաչ, կարմիր, դեղին) որմանկարները, որոնք ունին երկրաչափական եւ ծաղկային գծածներ, եւ որոնց մէջ առաջին անգամ ըլլալով երեւան կու գայ քոչմանկարը: Մարդկային պատկերածներ չկան:

Միւս կողմէ, գտնուեցան հերովդէսեան շրջանի (երկրորդ Հասարակապետութիւն) սենեակներ՝ որոնցմէ ոմանք կամարակապ ձեղուններով: Առաջին անգամ է որ լաւ պահուած եւ իրենց ձեղուններով բնակելի նման սենեակներ կը գտնուին՝ յիշեալ ժամանակաշրջանին վերաբերող: Խեցեղէն քաղմագան անօթներու կողքին, շատ կարեւոր գիտ մըն էր մետաղեայ սուրի մը յայտնաբերումը՝ իր փայտեայ պատեանով, որուն հաւանական բուսական կը տրուի Քրիստոսի 50—70 շրջանը: Ի մի խօսք, որմանկարներու եւ խեցեղէն անօթներու բեկորներու վերակազմութիւնը, որ բաւական երկար ժամանակ չէ տեսնուած աշխատանք կը պահանջէ, մեծապէս պիտի օգնէ հերովդէսեան շրջանի արուեստն ու կեանքը ուսումնասիրելու:

Երկրորդ Հասարակապետութեան շրջանի կառոյցներուն վրայ զբաղուեցան Բիզանդական շինութիւններու մնացորդներ, խնամկարներ (*mosaic*), խաչեր եւայլն, որոնք ենթադրել կու տան Բիզանդական եկեղեցիներու գոյութիւնը նոյն վայրին վրայ:

Իսկ աւելի ուշ, Արաբական Օմայեան եւ Ապպասեան շրջանին, Սիւնի բարձունքի պատմական այս վայրը բնակուած կը թուի ըլլալ քրիստոնեաներէ:

Որոշ է որ, Հայ Պատրիարքութեան պարտէզին եւ Սուրբ Փրկիչի հողին վրայ կատարուած պեղումները շատ մեծ նպաստ մը պիտի բերեն երուսաղէմի պատմութեան մասնաւորաբար հերովդէսեան շրջանի գիտական ուսումնասիրութեան: